



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 փետրվարի 2016 թվականի N 113 - Ն

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԱՓՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել օրենսդրական չափազիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից 6 ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. փետրվարի 15
Երևան



Ց Ա Ն Կ

**ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԱՓՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ**

Ց Ա Ն Կ

**I. Գնորդի և վաճառողի միջև առևտրային գործողություններում, արտադրողի
և իրացնողի միջև հաշվարկներում**

1.	Հեղուկի և գազի ծախսի և հոսքի որոշման սարքեր, ջրի հաշվիչներ	7.	Գազաբաշխիչ աշտարակներ
2.	Հեղուկ նավթամթերքի հաշվիչ	8.	Չափման համար նախատեսված ծավալային տարաներ
3.	Բնական գազի հաշվիչ	9.	Էլեկտրական էներգիայի հաշվիչներ
4.	Կշեռք, կշռաքար	10.	Հոսանքի տրանսֆորմատորներ
5.	Ավտոմոբիլային սակաչափիչներ	11.	Լարման տրանսֆորմատորներ
6.	Նավթամթերքի բաշխիչ աշտարակներ		

II. Առողջապահության բնագավառում

1.	Ջերմաչափեր-ջերմակարգավորիչներ	14.	Ասպիրատորի ռոտամետր
2.	Անալիզատորներ	15.	Ֆոտոկոլորիմետրեր
3.	Թրթռաչափ	16.	րհ-մետր
4.	Պոլյարոգրաֆ, վոլտ-ամպերմետր	17.	Նիտրատոմետր
5.	Ռադիոմետր-դոզիմետրեր	18.	Իոնոմետր
6.	Տոնոմետրեր	19.	Անալիտիկ, տեխնիկական, տորսիոն և էլեկտրոնային կշեռք
7.	Էլեկտրակարդիոգրաֆ	20.	Անեմոմետր
8.	Էլեկտրամիոգրաֆ	21.	Շաքարաչափ
9.	Էլեկտրաէնցեֆալոգրաֆ	22.	Սպիրտաչափ
10.	Պուլսօքսիմետր	23.	Տեխնիկական և կոնտակտային մանոմետր
11.	Ուրինոմետր	24.	Կշռաքարեր, կշռաքարերի հավաքածու
12.	Սպեկտրաֆոտոմետրեր	25.	Խտաչափերի լրակազմ
13.	Լսողական առանձնահատկությունների որոշմանն ուղղված չափման միջոցներ	26.	Համակարգչային սպիրոգրաֆ

III. Շրջակա միջավայրի պահպանության, աշխատավայրում անվտանգության ապահովման և պատահարների կանխման ժամանակ

1.	Աղմկաչափեր	11.	Նիտրատներ
2.	Հոսքաչափեր	12.	Պղտորաչափեր
3.	Հոսանքի ուժի և լարման չափման միջոցներ	13.	Գազանալիզատորներ
4.	Ծխաչափեր	14.	Ասպիրատորներ, էլեկտրահաղորդականության չափման միջոցներ
5.	Օդի, ջրի, հողի անալիզատորներ	15.	Համընդհանուր շարժական համակարգի պլեհավաքներ
6.	Սպեկտրոմետրեր	16.	Ալֆա - ճառագայթային աղբյուրներ
7.	Էլեկտրամագնիսական պարամետրերի չափման միջոցներ	17.	Բետա - ճառագայթային աղբյուրներ
8.	Մանոմետրեր	18.	Գամմա - ճառագայթային աղբյուրներ
9.	pH-մետրեր	19.	Դոզիմետրեր
10.	Իոնաչափեր	20.	Հեղուկի և գազի ծախսի և հոսքի որոշման սարքեր, ջրի հաշվիչներ

IV. Ճանապարհային երթևեկության վերահսկման և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակը գնահատելու ժամանակ

1.	Արագաչափեր	4.	Ծխաչափեր
2.	Ալկոմետրեր	5.	Լուսաթափանցելիության չափման միջոցներ
3.	Գազի անալիզատորներ		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

